ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.03.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/53

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ /համատեղ գործունեության պայմանագիր/

Մասնակցությամբ՝
«Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ի տնօրեն և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Լաճիկյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով բաց մրցույթ, բուլդոզերների, էքսկավատորների և գրեյդերների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2885-2021 գրությամբ «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ին և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.02.2021թ.-ի թիվ Պն/Պն/02/897-2021 գրության հիման վրա, 01.03.2021թ.-ին «Ավանգարդ էյ էմ» ՍՊԸ-ին և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.03.2021թ.-ին:

01.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/53 համարի ծածկագիրը:

11.03.2021թ.-ին և 19.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.03.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.02.2021թ.-ի թիվ Պն/Պն/02/897-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև <ԱՎԱՆԳԱՐԴ ԷՅ ԷՄ> ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր <ՊՌՈՄՏԵԽՍՏՈՈՅ> ՍՊԸ-ի հետ/: Մասնակցի կողմից ներկայացված Հավելված N 1-ում նշված չեն, թե <ԱՎԱՆԳԱՐԴ ԷՅ ԷՄ> ՍՊԸ-ն և համատեղ գործունեության պայմանագիրի կողմ հանդիսացող <ՊՌՈՄՏԵԽՍՏՈՈՅ> ՍՊԸ-ն որ երկրի ռեզիդենտ են հանդիսանում:

Հանձնաժողովը 16.02.2021թ. մասնակցին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Ավանգարդ էյ էմ» ՍՊԸ-ի և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. **«Ավանգարդ էյ էմ» ՍՊԸ-ի և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 03.03.2020թ.-ի գրությամբ դիմել է «Ավանգարդ էյ էմ» ՍՊԸ-ին և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2885-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով 11.03.2021թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում հայտնելով հետևյալը՝

««Ավանգարդ ԷՅ ԷՄ» ՍՊ և «ՊՐՈՄՏԵԽՍՏՐՈՅ» ՍՊ ընկերություններին (այսուհետ՝ կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված U3-LO-2021/53 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հայտնում ենք, որ առկա չեն հիմնավորումներ մեր ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար ներքոնշյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ուղղորդված գրությամբ որպես գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու հիմնավորում վկայակոչել է այն փաստը, որ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում

նշված չի եղել թե «Ավանգարդ ԷՅ ԷՄ» ՍՊ և «ՊՐՈՄՏԵԽՍՏՐՈՅ» ՍՊ ընկերությունները, որ երկրի ռեզիդենտ են հանդիսանում, ինչի պատճառով գնման ընթացակարգի հանձնաժողովը ծանուցել է կոնսորցիումին՝ շտկել անհամապատասխանությունը, ինչը կոնսորցիումի կողից չի իրականացվել: Վերոնշյալ հիմնավորումը իրավաչափ չէ, քանի որ.

1) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):»:

2) ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետը սահմանում է.

«32. Հրավերով նախատեսվում է նաև, որ՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքերում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին, իսկ գնային առաջարկը գնման հայտով սահմանված ծառայության ձեռքբերման նախահաշվային արժեքից, որը հրապարակվում է հրավերով, պակաս լինելու դեպքում՝ նախահաշվային արժեքին: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում, ապահովման գործողության ժամկետը չպետք է պակաս լինի կնքվելիք պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման վերջնաժամկետից, ներառյալ՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման համար սահմանված ժամկետը, և ներկայացվում է օրենքի 35-րդ կետով սահմանված կարգով: Սույն պարբերությամբ նախատեսված կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովումը պահվում է լիազորված մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում,

դ. գնային առաջարկ,

ե. հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (Ականավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ,

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

է. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

ը. հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

թ. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն

անձի (անձանց) փվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում.

ժ. խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում4 հայտերի գնահատման համար հրավերով պահանջված փաստաթղթերը:»:

3) ««ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ հրավեր) 1-ին մասի 4.3-րդ կետը սահմանում է.

«4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին,

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին,

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ

փոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների փվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ըստրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում,

2) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)

3) իր կողմից հաստատված գնային առաջարկ,

5) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով,

6) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) սույն ընթացակարգին մասնակցելու դեպքում՝ համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը, եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին: Այն դեպքում, երբ համատեղ գործունեության պայմանագրով նախատեսվում է, որ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, ապա պայմանագիր կնքվելու դեպքում դրա հիման վրա վճարումները կատարվում են հայտը ներկայացրած մասնակցին:»:

4) Հրավերի 2-րդ մասի 1.2-րդ կետը սահմանում է.

«1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:»:

Վերը նշված բոլոր իրավանորմերը սահմանում են այն փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, որոնք գնման ընթացակարգի մասնակից պետք է ներկայացնի հայտում: Ավելին՝ հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, թե ինչ

տեղեկություններ պետք է պարունակի ընթացակարգին մասնակցության դիմումումը, մասնավորապես՝ էլ. փոստը, հեռախոսահամարը և այլն: Սակայն դրանցից և ոչ մեկը չի սահմանում, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի, թե վերջինս որ երկրի ռեզիդենտ է: Վերոգրյալից հետևում է, որ նման տեղեկատվություն ներկայացնելու պարտավորություն մասնակիցը չունի, իսկ պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել հրավերով առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները: Հետևաբար կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը շտկման ենթակա չէր, ուստի և կոնսորցիումը որևէ պարտավորություն չի ունեցել:

2. Գնման ընթացակարգի կողմից ուղարկված ծանուցման մասով հայտնում ենք, որ պահպանված չեն դրա վավերապայմանները: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված է, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույն ակ անաց ման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (Ականավորված) տարբերակով: Իսկ նույն կարգի 41-րդ կետը սահմանում է, որ մասնակցին ծանուցումն ուղղորդում է գնման ընթացակարգի քարտուղարը: Տվյալ պարագայում վերոնշյալ իրավանորմերի պահանջները պահպանված չեն, ուստի, մասնակիցը չի կարող գնահատվել պատշաճ ծանուցված:

Ելնելով վերոգրյալից կարելի է փաստել, որ պատվիրատուի պահանջը՝ ներկայացնելու հայտի շտկված տարբերակը իրավաչափ չի եղել և կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը ենթակա չի եղել շտկման: Իսկ ներկայացված ծանուցումը չի եղել պատշաճ կազմված: Ուստի, խնդրում ենք մերժել կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը.»:

4. **ՍՑ-LO**-2021/53 **ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բուլդոզերների, էքսկավատորների և գրեյդերների ձեռքբերման նպատակով 28.12.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ն և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր/:

iii. «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ն և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր/ թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ (այսուհետ նաև՝ Հայտարարություն) հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով հայտարարված բաց մրցույթի 1-ին և 3-րդ չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Հայտարարությամբ Մասնակիցը նշել է «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ի և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ի հարկ վճարողի հաշվառման համարները, էլեկտրոնային փոստի հասցեն, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, իրական շահառուների մասին տեղեկություն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.02.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ի և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածով նշված չեն, թե «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ն և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ն ո՞ր երկրի ռեզիդենտ են հանդիսանում:

vi. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է 16.02.2021թ.-ին մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և անհամապատասխանությունները շտկման վերաբերյալ ծանուցել Մասնակին:

vii. Հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով ծանուցում է ուղարկել Մասնակցի avangardmllc@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին՝ ներկայացնելով նույնաբովանդակ ծանուցում:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը, ուստի Հանձնաժողովը 19.02.2021թ.-ին Մասնակցի հայտը մերժել է:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2885-2021 գրությամբ «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ին և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքերում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին, իսկ գնային առաջարկը գնման հայտով սահմանված ծառայության ձեռքբերման նախահաշվային արժեքից, որը հրապարակվում է հրավերով, պակաս լինելու դեպքում՝ նախահաշվային արժեքին: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում, ապահովման գործողության ժամկետը չպետք է պակաս լինի կնքվելիք պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման վերջնաժամկետից, ներառյալ՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման համար սահմանված ժամկետը, և ներկայացվում է օրենքի 35-րդ կետով սահմանված կարգով: Սույն պարբերությամբ նախատեսված կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովումը պահվում է լիազորված մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում,

դ. գնային առաջարկ,

ե. հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի

բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ,

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

է. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

ը. հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին,

թ. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող

մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 28.12.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 4.3-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ

տոկոսից ավելին: Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բուլդոզերների, էքսկավատորների և գրեյդերների ձեռքբերման նպատակով 28.12.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ն և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր/ թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով հայտարարված բաց մրցույթի 1-ին և 3-րդ չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Նույն հայտարարությամբ Մասնակիցը նշել է «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ի և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ի հարկ վճարողի հաշվառման համարները, էլեկտրոնային փոստի հասցեն, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, իրական շահառուների մասին տեղեկություն:

Հանձնաժողովի 16.02.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ի և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածով նշված չեն, թե «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ-ն և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ն ո՞ր երկրի ռեզիդենտ են հանդիսանում, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է 16.02.2021թ.-ին մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և անհամապատասխանությունները շտկման վերաբերյալ ծանուցել Մասնակին, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով ծանուցում է ուղարկել Մասնակցի avangardmllc@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին՝ ներկայացնելով նույնաբովանդակ ծանուցում: Սակայն Մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել

պահանջվող փաստաթղթերը, ուստի Հանձնաժողովը 19.02.202թ.-ին Մասնակցի հայտը մերժվել է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ պարագայում, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետով և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 4.3-րդ կետով սահմանված է մասնակցի կողմից գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով դիմում-հայտարարությամբ ներկայացվող տեղեկությունների պարունակության մասին տվյալները, որով սահմանված չէ պարտադիր որևէ դրույթ այն մասին, որ մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ պետք է նշում կատարի ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ հանդիսանալու մասին:

Վերոնշյալ հանգամանքի առկայության դեպքում միայն հնարավոր կլիներ փաստել Մասնակցի կողմից պարտավորության ստանձնման և ապա այն խախտելու հանգամանքի առկայությունը: Այլ կերպ ասած՝ Մասնակցի պատասխանատվությունը կարող է վրա հասնել միայն այն դեպքում, երբ վերջինիս կողմից ներկայացվի Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետով և Հրավերի 4.3-րդ կետով սահմանված պայմաններին չհամապատասխանող հայտ, քանի որ Մասնակիցը բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ ստանձնում է հրավերի պահանջներին համապատասխան հայտ ներկայացնելու պարտավորություն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն «Ավանգարդ էյ էմ» ՍՊԸ-ին և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր/ առաջարկելով շտկել հայտում առկա անհամապատասխանությունը, գործել է ոչ իրավաչափ, ուստի նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2885-2021 գրությամբ «Ավանգարդ Էյ Էմ» ՍՊԸ և «Պռոմտեխստրոյ» ՍՊԸ /համատեղ գործունեության պայմանագիր-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/53 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**